22. ԱՃՈՒՃ-ՄԱՃՈՒՃ

Կէղնի, չէղնի թաքավորըմ։ Թաքավորը մե տղա կունենա։ Թաքավորին մեկ կնիկ լե կէղնի, էտ տղայի մեր լե խորթ է։

Էտ մեր կուղեր էտ տղին կորցընել։ Էրկան ըսեց.— Անպես խալի մը կուզես քու տղից, օր թե ասկյար ասկըրով, ասպար ասպըրով նստին վրեն, կես լե հ'էվելնա։

Հեր կանչեց տղին, ըսեց.— Անպես խալի մը կուզիմ քեզնե, օր ասկյար ասկըրով, ասպար ասպըրով նստին վրեն, կեսն լե հ'էվելնա։

Տղեն է, խաչ կպավ, մատեն էրեց, էկավ նստավ ուր կնոջ խեչ։

Կնիկ հարցուց.— Ի՞նչ է էղե քեզի։

Ասեց.— Ի՞նչ տհա էղնի, հերս անպես խալի մը կուղե, օր ասկյար ասկըրով, ասպար ասպըրով նստին վրեն, կես լե ավելնա։ Էտի հ'ու՞ստեն գտնամ։ Էտի կուղե զիս մեռցընել։

Կնիկ ասեց.—Վըր ըտ խալուն մը մտածե, հ'էլի գնա ֆլան սարի գլուխ քեռշկըմ կա, գնա կանի փանճարի հ'առեջ, ասա. «Մամիա խանում, քու քուրը էն պղտի խալիչեներուց խալի մը կուղե»։ Քըզի խալի մը կիտա, դու օր ետ կդառնաս, քար ու թուփ քու վրա կբռռան՝ հողեղեն տարավ զհրեղեն, դու չըս դառնա եսկատի իշկի։

Տղեն գնաց, առավ զխալին, էկավ։ Բերեց տվեց թաքավորին։ Պարգեցին, ասկյար ասկըրով, ասպար ասպըրով նստան վրեն, կես լե հ'էվելցավ։

Վերջ էտ կնիկ ու թաքավոր մտածեցին, թե ինչ էնին։ Կանչեցին

զտղեն, ըսին.— Էն տեսակ ճութ մը խաղող կուղինք, օր ասկյար ասկըրով, ասպար ասպըրով ուտին, կես լե գետին մնա։

Տղեն խտչ կպավ, էլավ դարձավ տուն։

Ուր կնիկ հարցուց.— Մարդ, ի՞նչ է էղե։

Մարդ լե վերուց կնկան ըսեց.— Ի՞նչ է էղե, կուլ է էղե, իմ ջիգրի մեջն է էղի, հերըս դրեր է վրես, ճութըմ խաղող կուղե, օր ասկյար ասկըրով, ասպար ասպըրով ուտեն, կես լե հ'էվելնա։

Տղի կնիկ ըսեց.—Մարդ, հոգ մ'էնե, էտ լե կհաջողվի։ Առավոտ ել, գնա էլի էն սարի քեռշկ, ասե. «Մամիա խանում, քու քուր էն պղտի ճթերուց ճութ մը խաղող կուղե, օր ասկյար ասկըրով, ասպար ասպըրով ուտեն, կես լե հ'էվելնա»

Առավոտ տղեն գնաց, առավ զխաղող, ետ դարձավ. քար, թուփ բռուաց՝ հողեղեն տարավ զհրեղեն։ Տըղեն չօլրավ, իսկի ետև չիրիշկեց։ Թե օլրեր, ետև իշկեր, քար կդառնար։

Առավ զխաղող, էկավ թաքավորին բերեց, զխաղող դրեցին ասկյար ասկըրով, ասպար ասպըրով կերան, կես լե հ'էվելցավ։

Վըր էտոր թաքավորն ու ուր կնիկ շատ մտածեցին՝ ինչո՞վ զէտի կորցունք, զէտոնք ասեցինք, գնաց բերեց։ Վերջո կնիկն ըսեց, թե.—Էն տեսակ բամ լե ուզինք, օր էրթա, չդառնա ետ։

Թաքավորն ըսեց.— Ի՞նչ ուզինք։

Կնիկն ըսեց.— Ուզինք Աճուճ-մաճուճըմ, թող բերե։

Թաքավորն ըսեց.— Աճուճ մաճուճ ի՞նչ է։

Թաքավորի կնիկ ըսեց.— Աճուճ-մաճուճ էն է, օր թիզ մը ուր բաժն է, խուրց մը ուր մորուքն է, յոթ թիզ լե ուր թերմաշն է։

Թաքավոր կանչեց զուր տղեն, ըսեց.—Աճուճ-մաճուճ մը կուզիմ, թիզ մը ուր բաժն էղնի, խուրձ մը ուր մորուքն էղնի, յոթ թիզ ուր թերմաշ էղնի։

Տղեն դարձավ ուր տուն, էտպես մատեն էրեր էր, նստեր էր։

Կնիկ հարցուց.— Ի՞նչ է էղեր քըզի։

Ըսեց.— Հերս դրեր է վրես Աճուճ-մաճուճըմ կուղե։

Կնիկ ըսեց.— Էտ լե կէղնի, հոգ մ'էնե։

Ելավ առավոտուն գնաց սար, էտ քեռշկի խեչ, ըսեց. «Մամիա խանում, քու քուրդ Աճուճ-մաճուճըմ կուղե»։

Առավ զԱճուճ-մաճուճ, ետ դարձավ, ետև չիշկեց, հ'իշկեր՝ քար կդառներ։ Քար ու թուփ էլի կբոռար՝ հողեղեն տարավ զհրեղեն։

Բերեց թաքավորի քեռշկ։ Աճուճ-մաճուճն էր, կանչեց թագավորի սաղրազամներ, ըսեց.— Ժողովուրդ, լսե՞ր իք, հեր տզից էն թավուր

խալի մը կուղե, օր ասկյար ասկրրով, ասպար ասպրրով նստին վրեն, կես լե հ՝էվելնա։ Էն տեսակ հեր հար չոքիր քար դառնա։

Անմիջապես հեր հար չոքեր քար դարձավ։

Ըսեց.— Ժողովուրդ, դուք լսե՞ր եք, օր հեր օրդուց ճութ մը խաղող ուղե, օր ասկյար ասկրով, ասպար ասպրրով ուտին, կես լե հ՝էվելնա։ Հրմալ հեր հար սիրտ քար դառնա։

Անմիջապես թագավոր հար սիրտ քար դարձավ։

Վերուց ըսեց.— Ժողովուրդ, լսե՞ր իք, օր հեր օրդուց էն տեսակ Աճուճ-մաճուճ մը ուղե, օր թիզ մը բաժ էղնի, խուրց մը մորուք էղնի, յոթ թիզ թերմաշ էղնի։ Էտ տեսակ հեր հար գլուխ քար էղնի։

Անմիջապես թաքավոր քար դարձավ։

Տղեն նստավ ուր տեղ թաքավոր, ուր մուրազին հասավ։

Երկնուց իրեք խնձոր իջավ, մեկ՝ ասողին, մեկ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։